**ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ**

**ՊԱՐՈՆ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ**

**Միքայել Ավետիսյանից**

**Հարգելի՛ պարոն Բալասանյան**

Այս տարի լրանում է հայ պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի մեծանուն ներկայացուցիչ, ծնունդով գյումրեցի Խաչատուր Ավետիսյանի ծննդյան 95 ամյակը և մահվան 25 ամյակը: Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ Խաչատուր Ավետիսյանը պետական մրցանակի դափնեկիր է, պրոֆեսոր, կոմպոզիտոր, ով արժանացել է համազգային ճանաչման ու գնահատանքի:

Նշանակալի է Խաչատուր Ավետիսյանի ներդրումը հայ ազգային երաժշտության զարգացման գործում: Լինելով փայլուն քանոնահար, նա հայ երաժիշտներից առաջինն էր, ով արժանացել է միջազգային մրցանակների: 1951թ. Բեռլինում «Անհատ կատարողների Երիտասարդական միջազգային 3-րդ փառատոնին» շահեց առաջին մրցանակ և ոսկե մեդալ: Որպես քանոնի լավ գիտակ նա կատարելագործեց հայկական քանոնը, նորովի բացահայտելով այդ նվագարանի հնարավորությունները, և ստեղծեց քանոնի կատարողական նոր դպրոց: Ավետիսյանը գրել է մի շարք դասագրքեր, որոնցից այսօր լայնորեն օգտվում են երաժշտական ուսումնական հաստատությունները բոլոր օղակներում: Նրա ստեղծագործությունները ջերմորեն ընդունվել են ժողովրդի կողմից դեռ կյանքի օրոք, ստացել են միջազգային լայն ճանաչում, և այսօր էլ հնչում են աշխարհի շատ բեմերից: Դրանք կոչված են երկար ապրել հայերի հոգիներում: Իսկ հեղինակին, ով ժամանակակիցների վկայությամբ եղել է շատ համեստ անձնավորություն, բարձրացրել են հայ երաժշտարվեստի մեծ վարպետի, հայ երաժշտության դասականի բարձրագույն կոչմանը:

1949 թվականից բնակվելով Երևանում նա սերտորեն կապված է եղել հարազատ քաղաք Գյումրիի հետ: Խաչատուր Ավետիսյանը մինչև կյանքի վերջը հանդիսացել է Գյումրու Պետական ժողովրդական նվագարանների անսամբլի մասնագիտական խորհրդատուն: Անսամբլի երկացանկի շատ ու շատ ստեղծագործություններ

մաէստրոյի ունկնդրության և հավանության արժանանալուց հետո են միայն ներկայացվել հանրությանը: Կոմպոզիտորի լավագույն երգերից մեկը՝ «Գյումրվա հին ֆայտոնը» (խոսք Գագիկ Հովհաննիսյանի) գրվել է հատուկ այս անսամբլի համար:

Այսօր հանրապետությունում և արտասահմանյան շատ երկրներում մեծ հարգանք և ճանաչում ունեցող երաժիշտ-կատարողներ (այդ թվում նաև ծնունդով գյումրեցի), ովքեր ուսանել են Խաչատուր Ավետիսյանի ղեկավարությամբ գործող պետական կոնսերվատորիայի ժողովրդական նվազարանների ամբիոնում, իրենց գործունեությամբ շարունակում են Խաչատուր Ավետիսյանի մանկավարժական, ստեղծագործական և կատարողական ավանդույթները:

Ներկայումս Գյումրու Ժողովրդական նվազարանների Պետական նվագախումբը (2005 թվականից) և Գյումրու թիվ 7 երաժշտական դպրոցը (1996 թվականից) կրում են Խաչատուր Ավետիսյանի անունը:

Նկատի ունենալով այն մեծ վաստակը, որ ունեցել Խաչատուր Ավետիսյանը հայ երաշտության զարգացման գործում, այն սերտ մշակութային կապերը, որոնցով մշտապես կապված է եղել մեծանուն կոմպոզիտորը հարազատ քաղաքի հետ, գյումրեցիների մեծ սերն ու երախտագիտությունը նրա հանդեպ, ինչպես նաև կոմպոզիտորի ընտանիքի անդամների՝ որդիների Գրիգորի, Միքայելի և նրա այրու Սոնա Ավետիսյանի մեծ ցանկությունը, առաջարկում ենք Գյումրու որևէ կենտրոնական փողոց վերանվանել Խաչատուր Ավետիսյանի անունով: Այս առաջարկի իրականացմանը միանում են նաև գյումրեցի մտավորականներ և մշակույթի գործիչներ:

Միքայել Ավետիսյան

23, Հունիս 2021